

**Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ԱՇՃՅԱՆԻ ՔԱՐՈՋՐ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԳԱՄՏՅԱՆ ԿԻՐԱԿԻՆ**
(6 ապրիլի 2003 թ.)

Միրելի հավաքացյալներ.

Այսօր Գալստյան կիրակին է, Մեծի Պահոց 6-րդ կիրակին, և գիտեք, որ պահքի այս ընթացքին յուրաքանչյուր կիրակի օրը հապուկ խորհուրդ ունի, հապուկ անուն ունի՝ դրախտի հիշատակեն, Արարքսումեն, Անառակի կիրակին մինչև Տնքեսի իմաստության կիրակին, մինչև աղոթքի գործության կիրակին և մինչև այսօր, երբ կարծեք կապրենք Քրիստոսի գալստյան նախագգացումին մեջ, որուն մեկ արպահայությունը պիտի ըլլար Քրիստոսի գալուստը Երուսաղեմ, և ապա Ավագ Շաբթյան փոները, որոնք մեզ կհասցնեն Զարկի փառավոր հիշատակին:

Բայց այս օրը, Գալստյան կիրակի ըլլալով հանդերձ, մեզի համար և շատ շարերուս համար ուխտի օր է, որովհետև երեկ մեր Եկեղեցվո մեջ նշվեցավ մեր հավաքո հոր, և Լուսավորիչ Նայրապետին Խոր Վիրապ մտնելուն և չարչարանքներուն հիշատակը, և արտոր համար է, որ երեկ ամենուր Պարարագ մարտցվեցավ, այս Տաճարին մեջ ալ, Իջման Սուրբ Սեղանին առջև, Ս. Պարարագի ընթացքին կարդացվեցավ ժամամուտ մը, որմն հաղված մը իբրև բնաբան ընտրեցի այն ձեզ հետ բաժնելու համար: Այնպեղ մեր Եկեղեցվո մեկ վանականը, հավանաբար մարդոցմն հուսահաղված, հալածական, դժվարություններու և փազնապի մեջ, իր նեղ օրերուն մեջ իր աչքը բարձրացուց երկինք նույն այդ Լուսավորչի վիրապամտի փոնին և ըսավ. «Ո՛վ մեր հայրը և Լուսավորիչը մեր հոգիներու, քու Եկեղեցվո զավակներդ, այսօր այս հրաշալի փոնին առիթով կխնդրենք, որ բարեխոս ըլլաք Քրիստոսի մոտ, որպեսզի քու Եկեղեցիդ ժողովրդիդ մնացորդները պահե խաղաղության մեջ՝ փրկելով մարմնավոր և հոգևոր թշնամիներե»:

Վստահ եմ, որ բոլորդ ալ ձայնակից կըլլաք ինձի նույն այս մաղթանքը, այս աղոթքը ուղղելով Քրիստոսի բարեխոսությամբը Ս. Լուսավորչին, որովհետև ոչ միայն իր փոնը երեկ էր, հաճախ և միշտ իր փոնն է մեր Եկեղեցվո մեջ: Մենք իրեն նվիրված ուրիշ փոներ ունինք՝ իր Խոր Վիրապն ելնելու փոնը, Միածնի փեսիլքի փոնը, Նշխարաց գյուրի փոնը, իր Որդվոց և թռռանց փոնը, բայց հաճախ և, գիտեք, ամեն օր զինք կհիշենք, ամեն օր իր բարեխոսությանը կղիմենք, ամեն անգամ որ սարկավագը իր քարոզը կկարդա և կխնդրե, որ սուրբերը բարեխոսեն՝ սկսելով Ս. Կույս Աստվածածինեն, Նովհաննես Մկրտիչեն, Սրբեփանոս Նախավկայեն և անպայման կհիշենք նաև մեր Գրիգոր Երկրորդ Լուսավորիչը:

Հայ Եկեղեցվո այս կազմակերպիչը և երկրորդ Լուսավորիչը ամեն օր մեր աղոթքներուն մեջ է, ամեն օր մենք իր բարեխոսությանը կղիմենք Աստվածածնի հետ միասին, որպեսզի Քրիստոս Աստված ողորմի մեզի, գթա մեզի, խաղաղություն փա մեզի, երջանկություն փա մեզի, բարօրություն փա մեզի և, ի վերջո, մեզի փա արքայության ուրախությունը:

Ինձի համար առանձնապես, ինչպես նաև շատ հոգևոր եղբայրներուս համար այս օրն ուխտի օր է, որովհետև մանուկ օրերես, փակավին ութ-ինը փարեկան հասակես կհիշեմ, թե

ինչպես Անթիլիասի Կաթողիկոսարան կերթայինք այս օրը, որովհետև ուխտի օր էր, և ջերմեռանդորեն կհամբուրեինք Լուսավորչի Աջը, և այդ պարկերը, այդ փապավորությունը մեզս է եղած միշտ ու միշտ, ուր որ ալ ապրած եմ իմ հոգևոր կյանքիս ընթացքին, որ զիս առաջ-նորդած է աշխարհով մեկ, և հարկապես հեղուկ եմ Լուսավորչի քայլերուն, անոր ուխտի ճամփաներուն, անոր քարոզած երկրին, անոր քարոզած աշխարհին՝ ըլլա Արամանիի ճամփաներուն, անոր քարոզած երկրին, անոր քարոզած աշխարհին՝ ըլլա Արամանիի ափերուն վրա, ըլլա Սեպուհ լեռան վրա, ըլլա այնպեղ, ուր ինքը իր վախճանը կնքեց վիհի ծառին բունին մեջ, Մանյա այրին մեջ ու հեղափոխական ալ հոն, ուր թաղեցաւ, Թորդան:

Այս բոլոր վայրերը փեսնելու ուրախություն ու բախտավորություն ունեցած եմ և հեղուկ եմ իր կյանքին, իր մահին հետո իր նոր կյանքին, երբ իր նշխարները սփռեցան աշխարհով մեկ և մինչև այսօր ալ կան Անթիլիասեն մինչև Նոր Զուղա, Երուսաղեմ, Պոլիս, Նապոլի: Ինչպես գիտեք, մի քանի փարիսեի առաջ, երբ Վեհափառ Հայրապետը Հռոմ գնաց, այնպեղ Լուսավորչի մատուցներեն մաս մը առավ և երբ երաւ Հայոց աշխարհ, և երջանիկ էի, որ ես կընկերանայի Վեհափառ Հայրապետի շքախումբին: Այդ իմաստով, ուրեմն, և՛ իբրև սուրբ, և՛ իբրև հայոց առաքյալ, և՛ ուխտի օր այսօր, ինձի համար մեծ ուրախություն և երջանկություն է այս խորանեն, այս եկեղեցին աղոթել և խոսիլ ձեզի հետ:

Բայց գիտեք ի վերջո, թե ո՞վ էր, մահկանացու մարդ մըն էր, մարդ մը, որ թերևս մեղքի մեջ ծնավ: Իր հայրը՝ Անակ, դաժան ծրագրիի համար էր եկած Հայաստան և արոր հետ-կանցով սպանվեցաւ հայոց Խոսրով թագավորը: Ինքը՝ Անակը, սպանվեցաւ Տաքերական կամուրջի մոտերը, և վեպ մըն է այդ ամբողջ պարամությունը, թե ինչպես Խոսրովի և Անակի որդիները՝ Տրդատը և Սուրենը, որ հետո Գրիգոր պիտի ըլլար, իրենց մանկությունը անցուցին Հռոմի և Կեսարիոն մեջ, ու հետո, թե ինչպես Տրդատ վերադարձաւ, գրավեց իր հայրե-նական գահը և թե ինչպես իրեն հետեցեալ Կեսարիոն մեջ քրիստոնեացած Սուրենը, որ դարձած էր Գրիգոր, և եկաւ Հայաստան, ձևով մը իր հոր մեղքերը քաղելու համար:

Մտաւ թագավորի մոտ ծառայության, թերևս ամեն բանի պարարաստ եղաւ իր հոր մեղքը քաղելու համար, բայց մեկ բան չուզեց ընել: Երբ հաղթանակեն հետո Տրդատ Ար-րաշարի մեջ պահանջեց, որ իր քարտուղարը՝ Գրիգորն ալ ծաղիկներ և ռսարներ ընծայե-ն աստվածներուն, Գրիգոր մերժեց: Մերժեց թագավորի հրամանը, որովհետև ինքզինքն հալ-պակ կզգար առավել Մեծ Թագավորի հրամանին, մերժեց՝ զփրկուլով հանդերձ, որ այդ մերժումը իրեն կրնա շատ ծանր նսրիլ, կրնա փառապանքի փանիլ, ցավի փանիլ, չարչա-րանքներու փանիլ, բանտարկության փանիլ, մահվան ալ փանիլ: Բայց երբեք չընկրկեցաւ իր հավատքի գործության մեջ, 13 փարի, կըսե պարամիչը, Խոր Վիրապին մեջ Գրիգոր բան-տարկվեցաւ, հրաշքով ապրեցաւ, կտոր մը հացով, որ ամեն օր հրեշտակը կուտար իրեն:

13 փարի հետո, երբ հայոց թագավորը սրիպված եր ուզեց կանչել իր իսկ բանտարկած անձը, ան Խոր Վիրապի խորեն ըստ՝ ես արթուն եմ, ողջ եմ: Դուրս ելաւ, բժշկեց թագա-վորը, թաղեց այդ օրերուն նահապտակված 40 կույսերը, որոնց գերեզմաններու վրա հետո վկայարաններ շինեց՝ Գայանեն, Հովհաննիսն, Շողակաթը: Ու հետո գիտեք, արդեն հայոց քրիստոնեացման ողջ պարամությունը, հայոց մկրտությունը և հարկապես այն սքանչելի փեսիքը, որ միայն Ս. Գրիգոր Լուսավորչին էր, Հայ Եկեղեցիին էր:

Որքան մեկ ժողովուրդ, որքան մեկ Եկեղեցի, Բրիտանիայի հիմնած որքան մեկ եկեղեցի փառ-յակներով կամ հարյուրներով ալ հաշվված, չունի այն գեղեցիկ ավանդությունը, այն փեսի-քը, որ Լուսավորչին էր, երբ այսպեղ, այս Տաճարին մեջ Ինքը ունեցաւ կիրակի իրիկուն

մը, ըստ պատմիչին, և ուր Քրիստոս Ինքը ոսկի ուռով եկավ և Իր մուրճովը գծեց առաջին եկեղեցիին հատակագիծը, այն եկեղեցիին, որը եղավ այս Սուրբ Էջմիածինը:

Կարծեք Քրիստոս, որ անգամ մը Բեթղեհեմի մեջ մարմնացած էր, մարդացած էր մեր փրկության համար, անգամ մը ևս աշխարհ իջավ, անգամ մը ևս մարմնացավ այս անգամ հայոց հողին վրա, Արարարի շուքին փակ, և իզուր չէ, որ բոլոր անոնք, որոնք դարերու ընթացքին, օտար ուղևորներ ալ հայերու հետ միասին եկած և այցելած են այս երկիրը, փեսած են Արարարի շուքին փակ և, ըստ իրենց, այնպեղ, ուր Անահիպի արձանը կար, սանդարամետը կար, այնպեղ, ուր չաստվածներու փաճարներ ու խորաններ կային, որուն մեկ մնացորդն ալ փակավին նույն այս խորանին փակն է՝ իբրև արքայանի մը հետք, այնպեղ, ուր կարգ մը պատմիչներու համաձայն, ինքը՝ Նոյ նահապետ առաջին մատաղը ըրած էր, այնպեղ Լուսավորիչ փեսիլը կհիացնե բոլոր մարդիկը այսօր ալ, ինչպես դարերու ընթացքին, և, վստահաբար և հավիտյան, որովհետև ամեն անգամ, որ այսպեղ կուգանք, ամեն անգամ, որ ծունկ կխոնարհինք, կզգանք, որ Քրիստոսի իջման վայրն է, յուրահատուկ սրբազնասուրբ խորան և Տաճար և՛ հայության համար, և՛ քրիստոնեության համար:

Գրիգոր Լուսավորիչ երբ իր առաքելական քարոզությունը սկսավ, քարոզեց Հայոց աշխարհը և նաև շրջակա երկիրներ, ինքը այնպիսի կառույց մը փվավ Հայ Եկեղեցիին, որ այլևս հայ ժողովուրդը հավերժ կապված մնաց իր Եկեղեցիին, ուր որ ալ ըլլար, ուր որ ալ երթար: Սուրբ Էջմիածնի շունչը, ոգին, օրհնությունը փարածվեցավ ամենուրեք: Ու հայը որ երկիրն ալ որ գնաց, ինչ արևի փակ ալ ապրեցավ, ինչ աստղերու փակ ալ մնաց, միշտ ու միշտ և այնքան արեն որ հավատարիմ մնաց Ս. Լուսավորչին, հավատարիմ մնաց իր Եկեղեցիին, իր ազգության, որովհետև, ի վերջո, այս Եկեղեցին իր ժողովրդին փվավ և՛ լեզու, և՛ մշակույթ, և՛ ճարտարապետություն, և՛ երաժշտություն, և՛ արվեստ, և՛ Աստծուն մոտենալու ամենեն գեղեցիկ կերպերը:

Միշտ ու միշտ հայը երախտապարտ եղավ Քրիստոսին և Անոր Եկեղեցիին և Անոր հայտրեն կազմակերպիչ Լուսավորչին: Եվ ընդհակառակը, մեր հայրենիքի միջից, Հայաստան աշխարհի միջից երբ մենք հեռացանք մեր Եկեղեցիին, երբ ուրացանք Հայաստանյայց Եկեղեցին, օրինակի համար նույնիսկ Նախիջևանի մեջ, մենք շուրով ուժացանք, հեռացանք և հավեր կորսվեցանք, արոր համար ալ, սիրելիներ, ամեն անգամ, երբ մենք Լուսավորչի բարեխոսությանը կդիմենք, կդիմենք այն հավաքքով, այն վստահությամբ, այն հույսով և սիրով, որ մենք պիտի ապրինք Արարարին շուքին փակ իբրև Հայ Եկեղեցվո գավակներ, հայ ազգի գավակներ, հավերժական հայության ուխտավորներ:

Այսօր կուգեմ իմ այս մրաժումները փակել դարձյալ դիմելով Խոտաճարակաց շարականին, որում շարականագիրը կըսե. «Ի ձեռն ամեալ Լուսավորիչ՝ զնշխար սրբոյ Կարապետին» օրհնեց Հայոց աշխարհը ձեռամբ Քրիստոսը մկրտող Կարապետին և ըսավ. «... աստ թշնամիք մի՛ գորասցին, մի հերձուածոց աղանդք բուսցին» («Այսպեղ թող թշնամիները չգորանան, հերձվածներ ու աղանդներ թող չբուսնեն»): Եվ կվերջացնե այս սրբաճառությունը հետևյալ բառերով. «Յերկնից գայր ձայն աստուածային՝ թե՛ հայցուածք թո՛ կարարեսցին» (Երկնքեն աստվածային ձայնը եկավ և ըսավ Լուսավորչին. «Քու խնդրվածքդ կարարվեցավ»): Այո, Հայոց աշխարհին թշնամիները պիտի հավեր հեռանան, հայ ժողովուրդը պիտի հավեր հավատարիմ մնա Քրիստոսի լույս հավաքքին, որուն լույսի մեջ ալ կուգեմ որ մնանք այժմ և միշտ հավիտյանս ժամանակաց. ամեն: